Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԱՐԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Մարիանա Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Իտալիայի Հանրապետություն, ք.Հռոմ, մարտի 25-ից 28-ը, 2025 թվական

4. Հրավիրող կողմը

Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցության ասոցիացիա (COST)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցության ասոցիացիայի (COST) բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոմիտեի 220-րդ նիստին

6. Քննարկված թեմաները

- COST-ի բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոմիտեի 219-րդ նիստի արձանագրությունը,
- COST-ի նախագահի Նորվեգիայի թեկնածուի ներկայացումը,
- 2024 թվականի բյուջեի կատարողականը և հաստատումը,
- COST-ի գործունեությունը ԵՄ հաջորդ շրջանակային 10-րդ ծրագրի շրջանակում,
- COST-ի գիտական խոհրդի հաշվետվությունը, գիտական խոհրդի կազմում նոր անդամների նշանակումը,
- Զեկույց՝ «COST-ի ակադեմիական ազդեցությունը» թեմայով,

- COST-ի շրջանակում երկու ցանցային նախագծերի հաջողության պատմությունները, ձեռքբերումները և հիմնական արդյունքները,
- Նորարարությունների վրա COST-ի շրջանակում իրականացված ծրագրերի ազդեցության գնահատումը,
- COST 2024 թվականին հայտարարված մրցույթի շրջանակում ներկայացված հայտերի վերլուծությունը,
- COST 2025 թվականի միջոցառումների պլանը,
- այլ ընթացիկ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցության ասոցիացիայի (COST) բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոմիտեի 220-րդ նիստի շրջանակում մասնակցել եմ նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը: Մարտի 26-ին քննարկվել են COST-ի բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոմիտեի 219-րդ նիստի արձանագրությունը, ներկայացվել է COST-ի նախագահի Նորվեգիայի թեկնածուն, ներկայացվեց 2024 թվականի գործունեությունը և հաստատվեց բյուջեի կատարողականը: Անդրադարձ է կատարվել 2027 թվականից հետո ԵՄ հաջորդ՝ 10-րդ շրջանակային ծրագրի համատեքստում COST-ի առաքելությանը և հնարավոր վերափոխումներին, ֆինանսավորման մեխանիզմների և ծավալների համար ԵՄ հանձնաժողովի հետ բանակցությունների վարման անհրաժեշտությանը: Ընդգծվել է առաջիկա տարիներին COST-ի եզակի դերը հաջորդ սերնդի գիտնականների պատրաստման և աջակցության հարցում:

Համաձայն 2024 հաշվետվության՝ COST ցանցային նախագծերում մասնակիցների քանակի աննախադեպ աճ է գրանցվել և աճի միտումը կանխատեսվում է նաև 2025 թվականին հայտարարված մրցույթի շրջանակում: Մասնավորապես աճել է ընդլայնվող երկրների (Widening countries) կազմակերպությունների մասնակցությունը, ինչը խոսում է ծրագրի հանդեպ մեծ հետաքրքրության մասին: Մասնակցության աճը և կանխատեսվող աճի տեմպերը դժվարություններ են ստեղծում ֆինանսական տեսակետից, ինչն առաջ է բերել անհրաժեշտություն ընդունելու արտակարգ իրավիճակի պլան՝ մասնավորապես COST

հիմնադրամի միջոցների ներգրավում: Նիստի ընթացքում ներկայացվել է պլանի էությունը և առաջարկվել է վերջինիս տալ հավանություն:

Քննարկվել են նաև COST նախագահի գործունեության ժամկետի, ինչպես նաև COST գործադիր խորհրդի անդամների վարձատրության նպատակահարմարության հարցը:

COST ցանցային նախագծերի ազդեցության ներուժի օգտագործման առումով կարևորվել է ԵՄ Հորիզոն Եվրոպա ծրագրերի (Marie Skłodowska-Curie Actions (MSCA), Joint Reseacrch Center (JRC), European Institute of Innovation & Technology (EIT) և այլն) միջև սիներգիաների ստեղծման անհրաժեշտությունը:

Մարտի 27-ին ներկայացվել է COST-ի գիտական խոհրդի հաշվետվությունը, ներկայացվել են Գիտական խորհրդում Ավստրիայի, Ալբանիայի, Հունգարիայի, Մոլդովայի, Սլովենիայի և Շվեդիայի անդամները: Ներկայացվել է գիտական զեկույց «COST-ի ակադեմիական ազդեցությունը» թեմայով, ինչպես նաև ներկայացվել են COST-ի շրջանակում երկու ցանցային ծրագրերի հաջողության պատմությունները, ձեռքբերումները և հիմնական արդյունքները:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

Ընդունվել է 2024 թվականի հաշվետվությունը և 2024 թվականի բյուջեի կատարողականը: Քննարկվել է ծրագրին մասնակցության աճի տեմպերով պայմանավորված արտակարգ իրավիճակի պլանը: Վերջինիս տրվեց հավանություն:

Ընդունվել է Գիտական խորհրդի հաշվետվությունը և հաստատվել են Ավստրիայի, Ալբանիայի, Հունգարիայի, Մոլդովայի, Սլովենիայի և Շվեդիայի գիտական խորհրդի անդամները: Ներկայացվել և հաստատվել է 2025 թվականի միջոցառումների ցանկը և ժամանակացույցը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

COST փոխնախագահ Զ. Պոպովսկիի հետ քննարկել եմ ս/թ ապրիլի 15-ին Երևանում անցկացվելիք «COST ազգային տեղեկատվական օր» միջոցառման օրակարգը և դրա շրջանակում նախատեսվող հանդիպումները: Անդրադարձ է կատարվել նաև COST ազգային ծրագրերում Հայաստանի մասնակցության ցուցանիշներին: ՀՀ մասնակցությունը ծրագրին աճել է՝ 2023 թվականին ՀՀ ընդգրկվածությունը նախագծերում կազմել է 23 տոկոս, իսկ 2024 թվականին՝ 30 տոկոս: Այժմ շուրջ 150 հայ գիտնականներ ընդգրկված են ցանցային 56 նախագծերում՝ որպես մասնակիցներ: Քննարկվել է նախագծերի ղեկավար պաշտոններում ՀՀ գիտնականների ընդգրկվածության ավելացման, ինչպես նաև Հայաստանում անցկացվող ցանցային միջոցառումների պարբերական անցկացման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի երկրի տեսանելիությանը և ծրագրի հանդեպ հետաքրքրության աճին:

Առաջարկվել է նաև դիտարկել COST բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոմիտեի առաջիկա նիստերից մեկը 2027 թվականին Երևանում հյուրընկալելու հարցը, ինչին ի պատասխան նշել եմ, որ առաջարկությունը կփոխանցվի Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ղեկավարությանը և քննարկման արդյունքների մասին կտեղեկացվի COST-ի քարտուղարությանն աշխատանքային կարգով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարիանա Սարգսյան
2 ապրիլի 2025 թվական